Արդարադատության ակադեմիա
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Փիրումյանների 9
Հեռ. (+37460) 46 00 87

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
Հեռ. (+37460) 71 02 32

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» 02 2020թ.

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս ռեկտոր Սերգեյ Առաքելյանի՝ մի կողմից, և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետը (այսուհետ՝ Ֆակուլտետ), ի դեմս դեկան Գագիկ Ղազինյանի՝ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

I. Հուշագրի նպատակները

1. Հուշագրի նպատակներն են՝

ա) ուսումնական և գիտական ոլորտներում ակտիվ և արդյունավետ համագործակցության հաստատումը.

բ) փորձի փոխանակումը.

գ) կառուցողական և շարունակական համագործակցության ապահովումը.

դ) Կողմերի ընդհանուր շահերի ներկայացումը և պաշտպանությունը:

II. Համագործակցության առարկան

2. Կողմերը համաձայնում են՝

ա) համատեղ մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծեր, ծրագրեր և այլ փաստաթղթեր.

բ) համատեղ մշակված ուսումնական և մեթոդական նյութերով կազմակերպել դասընթացներ.

գ) Ֆակուլտետի դասախոսներին ներգրավել Ակադեմիայում դասավանդման գործընթացին.

դ) փոխանակել գիտական նյութեր, գրականություն, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն.

ե) համատեղ իրականացնել գիտահետազոտական ծրագրեր, այդ թվում՝ համատեղ գիտահետազոտական կոլեկտիվների ստեղծման միջոցով.

զ) կազմակերպել համատեղ գիտական միջոցառումներ՝ քննարկումներ (կլոր սեղաններ), համագումարներ, գիտաժողովներ, սեմինարներ, փորձի փոխանակմանն ուղղված այլ միջոցառումներ.

է) համատեղ իրականացնել հրատարակչական գործունեություն, փոխադարձ աջակցություն ցուցաբերել պարբերականների հրատարակման գործում.

ը) փոխանակել տեղեկատվություն Կողմերի գործունեության արդյունքների մասին.

թ) համատեղ իրականացնել միջոցառումներ Կողմերի ձեռքբերումների, գործունեության արդյունքների լուսաբանման նպատակով.

ժ) ընդլայնել համագործակցությունը Կողմերի գործունեությունից բխող այլ ուղղություններով:

III. Եզրափակիչ և անցումային դրույթներ

3. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Կողմերը կարող են Հուշագրում փոփոխություններ կատարել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կազմում է Հուշագրի անբաժանելի մասը:

5. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Հուշագրի գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնում է առնվազն երկու ամիս առաջ: Այդ դեպքում Կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև պայմանագրի դադարեցումը չավարտված ծրագրերը:

6. Հուշագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ	**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ**
ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ	**ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ**